**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1**
**04.05.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԲՄԱԾՁԲ-2018/5ծ/1 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան «14» մայիսի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև` Պատվիրատու), մի կողմից, և Ճանշին Տեխնախ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գառնիկ Մինասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ` Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև` Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության ապրիլի 26-ի թիվ 509-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 04.05.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԲՄԱԾՁԲ-2018/5ծ/1 պետական գնման պայմանագրի (այսուհետև` Պայմանագիր) 8.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ` Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Կողմերը համաձայնվեցին.

1.1 Հաստատել Համաձայնագրի 2018թ. վճարման ժամանակացույցը համաձայն հավելվածի (կցվում է):

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված` Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | «Ճանշին Տեխնախ» ՍՊԸ |
| ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3. | ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Ակներ, 15փ., 12/2տ. |
| ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | «Արդշինբանկ» ՓԲԸ, «Գորիս» մ/ճ |
| ՀՎՀՀ 02565518 | ՀՎՀՀ 09211151 |
| ՀՀ 900011020246 | ՀՀ 2475700362170010 |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հաստատված է
NՏԿՆ-ԲՄԱԾՁԲ-2018/9Ծ/3 գնման պայմանագրի
□-14-□ մայիս 2018թ. կնքված
թիվ 1 Համաձայնագրով

ՀԱՎԵԼՎԱԾ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 45221117 | *ՀՀ Սյունիքի մարզի Վերիշեն գյուղի վթարված կամրջի վերականգնման աշխատանքների կատարում* | - | - | - | - | 18 499 200 | 18 499 200 | 18 499 200 | 18 499 200 | 18 499 200 | 18 499 200 | 18 499 200 | 18 499 200 | 18 499 200 |
| 2 | 45221117 | *Մ6 Տ-8-81, Մ-12-Խնածախ-Վաղատուր-Տ-8-13 կմ2+800 հատվածի երկաթբետոնյա խողովակի վերականգնման աշխատանքների կատարում* | | | | | 21 000 000 | 21 000 000 | 21 000 000 | 21 000 000 | 21 000 000 | 21 000 000 | 21 000 000 | 21 000 000 | 21 000 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518
ՀՀ 900011020246

_______________
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ճանշին Տեխնախ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Ակներ, 15փ., 12/2տ.
«Արդշինբանկ» ՓԲԸ, «Գորիս» մ/ճ
ՀՎՀՀ 09211151
ՀՀ 2475700362170010

_______________
/ստորագրություն/
Կ.Տ

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 3 տարին: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման

ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 39 499 200 (երեսունինը միլիոն չորս հարյուր իննսունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, որից 6 583 200 (վեց միլիոն հինգ հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը. ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ 18 499 200 (տասնութ միլիոն չորս հարյուր իննսունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ որից 3 083 200 (երեք միլիոն ութսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին՝ 21 000 000 (քսանմեկ միլիոն) ՀՀ դրամ՝ որից 3 500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

**6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար :

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

**7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում։

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն։ Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները։

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը։ Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է։

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են։

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա։ Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն։

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի։ Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները՝ կազմված 6 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տրանսպորտի, կապի և
տեղեկատվական տեխնոլոգիաների
նախարարություն
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ճանշին Տեխնախ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Ակներ, 15փ.,
12/2տ.
«Արդշինբանկ» ՓԲԸ, «Գորիս» մ/ճ
ՀՎՀՀ 09211151
ՀՀ 2475700362170010

/ստորագրություն/
Կ.Տ.

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
## ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

ՀՀ Սյունիքի մարզի Վերիշեն գյուղի վթարված կամրջի վերականգնման աշխատանքների կատարման

| NN | Աշխատանքների անվանումը | Չափ. միավ. | Ծավալ | Միավորի արժեքը (հազ. դրամ) | Ընդհանուր արժեքը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Տրանսպորտային միջոցների երթևեկությունը կարգավորող ճան. նշանների պատրաստում և տեղադրում հետազա կազմատումով. Նախազգուշացնող – 1.23 և 1.30 (4 հատ): Առավելության – 2.6 և 2.7 (2 հատ): Արգելող - – 3.24 (2 հատ): Կարգադրող – 4.2.1 և 4.2.2 (2 հատ): Վերադարձ 50%: | հատ | 10 | 20.8 | 208.00 |
| 2 | Կամրջի մուտքում գրունտի և կենցաղային աղբի մաքրման աշխատանքներ 0.65 շ.տ. էքս. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա: | $մ^3$ | 38.9 | 2.31 | 89.86 |
| 3 | Կամրջի հունում գրունտի և կենցաղային աղբի մաքրման աշխատանքներ ձեռքով բարձումով կույտի մեջ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա: | $մ^3$ | 28.0 | 18.07 | 505.96 |
| 4 | Վերանորոգման աշխատանքների ընթացքում ջրի անրդհատ հոսք ապահովելու համար &720x7 պողպատե խողովակի տեղադրում, հետազա ապամոնտաժումով: Վերադարձ 100%: | գմ | 9.0 | 57.52 | 517.68 |
| 5 | Հիմքերի ուժեղացման համար խրամուղիների փորման հողային աշխատանքներ ձեռքով պնևմագործիքի օգնությամբ, բարձումով կույտի մեջ բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա: | $մ^3$ | 1.8 | 26.98 | 48.56 |
| 6 | Վաքի և հենակային պատերի իրականացման համար կամրջի վերջում աջ կողմի գրունտի կազմատում ձեռքով կողքի զգումով-$6^{6}$ III: | $մ^3$ | 5.3 | 4.16 | 22.05 |
| 7 | Վաքի իրականացման համար մակերևույթի համահարթեցում ձեռքով: | $մ^2$ | 40.5 | 0.38 | 15.39 |
| 8 | Նախապատրաստական շերտի ավազակոպիճ, h=10 սմ: | $մ^3$ | 4.35 | 7.4 | 32.19 |
| 9 | Հիմքերի ուժեղացում միաձույլ B20 F100 դասի բետոնով: | $մ^3$ | 6.6 | 78.4 | 517.44 |
| 10 | Վաքի և հենակային պատերի միաձույլ B20 F100 դասի բետոն: | $մ^3$ | 11.28 | 98.16 | 1107.24 |
| 11 | Մայթի վրա գտնվող մետաղական արգելափակոցի կազմատում, վերադարձ սեփականատիրոջը: | գմ | 13.0 | 2.83 | 36.79 |
| 12 | Երթևեկային մասի և աջ կողմում պարապետի տեղամասում $6^{6}$ III գրունտի կազմատում և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա: | $մ^3$ | 22.1 | 6.73 | 148.73 |
| 13 | Գոյություն ունեցող հենարանի վրա անցքերի զայլիկոնում, $D=40 L_1=0.25$ մ: | հատ | 30 | 1.856 | 55.68 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 14 | *Խարսխային ձողերի տեղադրում, &16 A500c $L_1$=0.62 մ, n=30 հատ:*<br>*Ներդիր մասեր*<br>*Ø12 A500c P=15.84 կգ,*<br>*--10x100 - P=31.4 կգ,*<br>*Ջրահեռացման խողովակ - Ø102x2 L=3x0.5=1.5 մ:*<br>*Էպօքսիդացեմենտային շաղախ - 0.004 $մ^3$:* | *տ* | *0.049* | *2151.84* | 105.44 |
| 15 | *Աջ կողմում պատի (պարապետի) իրականացում միաձույլ*<br>*B20 F100 դասի ե/բետոնով:*<br>*&12 A500 c P=188.48 կգ,*<br>*&8 A240 P=81.84 կգ:* | *$մ^3$* | *5.08* | *117.68* | 597.81 |
| 16 | *Կամրջի վերջում աջ կողմի պատի իրականացման համար փոսորակի փորման հողային աշխատանքներ 0.65 շ.տ. էքս. -10eIV կողքի կուտակումով հետագա հետլիցքի համար:* | *$մ^3$* | 75.0 | *0.95* | 71.25 |
| 17 | *Նույնը՝ ձեռքով:* | *$մ^3$* | 4.0 | *7.34* | 29.36 |
| 18 | *Ավազակոպճային նախապատրաստական շերտ- h=10 սմ:* | *$մ^3$* | 1.1 | *7.4* | 8.14 |
| 19 | *Պատի հիմքի միաձույլ բետոն - B20 դասի:* | *$մ^3$* | 12.41 | *76.33* | 947.26 |
| 20 | *Պատի իրանի միաձույլ բետոն - B20 դասի:* | *$մ^3$* | 14.31 | *78.5* | 1123.34 |
| 21 | *Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով:* | *$մ^2$* | 46.40 | *1.47* | 68.21 |
| 22 | *Պարապետների միաձույլ բետոն - B20 դասի, L=2x3.5 մ:*<br>*Խարսխային ձողեր &20A500c, L=6.4 մ, P=15.8 կգ:* | *$մ^3$* | 1.05 | *178.2* | 187.11 |
| 23 | *Պահեստավորված գրունտով հետլիցքի իրականացում 0.65 շ.տ.*<br>*էքս. Տեղադրումը շերտ-շերտ ջրումով և տոփանումով* | *$մ^3$* | 48.50 | *1.72* | 83.42 |
| 24 | *Նույնը՝ ձեռքով:* | *$մ^3$* | 3.00 | *2.51* | 7.53 |
| 25 | *Ավելորդ գրունտի բարձում ա/ի 0.65 շ.տ. էքս. և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա:* | *$մ^3$* | 23.5 | *2.38* | 55.93 |
| 26 | *Կամրջի սկզբում կոյուղու դիտահորի վերանորոգման համար պարագծով խրամուղու փորման հողային աշխատանքներ ձեռքով կողքի կուտակումով հետագա հետլիցքի համար- 10eIV:* | *$մ^3$* | *0.96* | *4.15* | 3.98 |
| 27 | *Կամրջի սկզբում կոյուղու դիտահորի կափարիչի ապամոնտաժում և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա:* | *տ* | *0.9* | *3.1* | 2.91 |
| 28 | *Կամրջի սկզբում կոյուղու դիտահորի վերանորոգում՝ պատերի և հատակի վերանորոգում, պատերի բարձրացում միաձույլ*<br>*բետոնով B20, F100՝նոր կափարիչի մոնտաժումով:* | *$մ^3$* | *1.6* | *204.92* | 327.87 |
| 29 | *Աջ կողմում պարապետի վրա բազրիքների տեղադրում - h=50 սմ՝ ներկումով: Ուղղանկյուն խողովակ - 50x30x2.5, L=60.53 մ:* | *տ* | *0.1731* | *877.7* | 151.93 |
| 30 | *Հարթեցնող շերտի ցեմենտային շաղախ անվահրիչի բլոկների սահմաններում - h=1սմ:* | *$մ^2$* | *7.8* | *0.85* | 6.63 |
| 31 | *Հարթեցնող շերտի միաժամանակ հոսքային եռանկյունու մանրահատիկ միաձույլ բետոն՝ խիճ≤10 մմ, $h_{միջ.}$=6 սմ B20, F100:* | *$մ^3$* | *5.5* | *78.04* | 429.22 |
| 32 | *Ջրամեկուսացման իրականացում երկշերտ իզոգամով:* | *$մ^2$* | *100.5* | *3.04* | 305.52 |
| 33 | *Հարթեցնող շերտի ցեմենտային շաղախ անվահրիչի բլոկների տեղադրման համար - h=1սմ:* | *$մ^2$* | *7.8* | *0.84* | 6.55 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 34 | *Մայթերի անվահարիչների БР-1 բլոկների հավաքովի ե/բետոն -B30 չափ. 60x75x99 սմ, քաշը - 0.455 տ, ա.պ. AI=27.58 կգ/մ³, AIII=159.34 կգ/մ³:* | *մ³* | *2.366* | *598.3* | 1415.58 |
| 35 | *Ամրանավորված պաշտպանիչ շերտի իրականացում միաձույլ բետոնով - H=4սմ -W6; ամրանային ցանց - Ø4 (100x100) - 91.5 մ²:* | *մ²* | *91.5* | *6.203* | 567.57 |
| 36 | *Ներքին շերտ մանրահատիկ ա/բետոնի ծածկի տեղադրում. H=4սմ:* | *մ²* | *91.5* | *4.79* | 438.29 |
| 37 | *Վերին շերտ մանրահատիկ ա/բետոնի ծածկի տեղադրում. H=3սմ:* | *մ²* | *97.5* | *3.68* | 358.80 |
| 38 | *Ձախ կողմի բազրիքի երկշերտ ներկում:* | *մ²* | *10.3* | *1.9* | 19.57 |
| 39 | *Անվահարիչի և պարապետի ուղղահայաց գծանշում:* | *մ²* | *18.8* | *1.0* | 18.75 |
| 40 | *Անվտանգության գոտիների հորիզոնական գծանշում - հոծ:* | *գմ* | *30.0* | *0.12* | 3.60 |
| | ***Մոտեցումներ*** | | | | 0.00 |
| 1 | *Հողային պաստառի հարթում բուլդոզերով* | *մ²* | *1280.0* | *0.0254* | 32.51 |
| 2 | *Խճային հիմքի իրականացում բիտումի տարածումով 4.12տ/1000 մ² h=12 սմ* | *մ²* | *1280.0* | *3.477* | 4450.56 |
| 3 | *Ծածկի իրականացում մանրահատիկ ա/բ h=5 սմ:* | *մ²* | *1280.0* | *5.893* | 7543.04 |
| | | | | Ընդամենը՝ | 22673.26 |
| | | | | Ընդհանուրը՝ | 22673.26 |

*Միավորի արժեքը ներառում է շահույթը և Ա.Ա.Հ.

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**ՉԱՓԱԲԱԺԻՆ 2**

**Ա/Ճ Տ-8-81, Մ-12-Խնածախ-Վաղատուր-Տ-8-13 կմ2+800 հատվածի երկաթբետոնյա խողովակի վերականգնման աշխատանքների կատարման**

| NN | Աշխատանքների անվանումը | Չափ. միավ. | Ծավալ | Միավորի արժեքը (հազ. դրամ) | Ընդհանուր արժեքը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | ***I. Շրջանցիկ ճանապարհի կառուցման աշխատանքներ*** | | | | |
| 1 | *10ᵉ-IV կարգի բնահողի հանույթ էքս. 1.0մ³ շ.տ. կողքի կուտակում, տեղափոխում բուլդոզերով 10մ լիցքի իրականացման համար (հարթում, ջրում, խտացում)* | *մ³* | *0.931* | *0.915* | *0.85* |
| 2 | *10ᵉ-IV կարգի բնահողի մշակում պահուստում, բարձում էքս. 1.25մ³ շ. տ. ա/ի և տեղափոխում լիցք (հարթում, ջրում, խտացում) 1կմ միջին հեռ.* | *մ³* | *1082.839* | *2.746* | *2973.48* |
| 3 | *Ավազակոպճային ծածկի իրականացում $h_{մու}$=12սմ* | *մ²* | *1144.83* | *0.672* | *769.33* |
| 4 | *Խճային հիմքի իրականացում (մետ. d=1020մմ խողովակի տակ)* | *մ³* | *12.18* | *6.05* | *73.69* |
| 5 | *Մետաղական մարտ=1020մմ խողովակի տեղադրում 1գծմ 298կգ, պատի հաստ. 12մմ* | *գծմ* | *14* | *344.672* | *4825.41* |
| 6 | *Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով* | *գծմ* | *13* | *6.47* | *84.11* |
| | ***II. Գաբիոնային շարվածք*** | | | | |
| *1* | *Գաբիոնների համար փոսորակի փորման հողային աշխատանքներ (10eIV բնահող). էքս. 1.0 մ³ շ.տ. կողքի կուտակումով* | *մ³* | *101* | *0.8* | *80.80* |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | *Գաբիոնների համար փոսորակի փորման հողային աշխատանքներ (10eIV բնահող). բարձ. էքս. 1.0 մ³ շ.տ. ա/ի վրա տեղափոխ. լցակույտ 4 կմ* | *մ³* | *179.9* | *1.06* | 190.69 |
| 3 | *Գաբիոնների համար փոսորակի փորման հողային աշխատանքներ (10eIV բնահող) ձեռքով կողքի կուտակումով:* | *մ³* | *14.5* | *6.17* | 89.47 |
| 4 | ***Հատակի համահարթեցման աշխատանքներ ձեռքով:*** | *մ²* | *70* | *0.318* | 22.26 |
| 5 | *Ավազակոպճային հիմք h=20 սմ* | *մ²* | *70* | *1.212* | 84.84 |
| 6 | *Գաբիոնային շարվածք 1x1x0.5 (քար) :*<br>*Հիմնակմախք d=6.5 մմ , 1գծմ=0.260 կգ, 1հատ=12.3գծմ*<br>***242 հատ 2976.6/773.916 գմ/կգ***<br>*Ցանցը ամրակով d=3.0 մմ,1մ²=1.445 կգ, 1 հատ=4 մ²*<br>***242 հատ 968/1398.76 մ²/կգ***<br>*Գաբիոնների կապող մետաղալար d=3.0մմ,1հատ=1.2գծմ,1 հատ=0.0665 կգ*<br>***242 հատ 290.4/19.3116 գմ/կգ***<br>*Խարսխային ամրանային ձող d=20մմ,1գծմ=2.466կգ, 1հատ.=0.5մ **70 հատ 35/86.31 գմ/կգ*** | *մ³* | *121.0* | *24.31* | 2941.51 |
| 7 | *Գաբիոնային շարվածք 1x0.5x0.5 (քար) :*<br>*Հիմնակմախք d=6.5 մմ , 1գծմ=0.260 կգ, 1հատ=9.3 գծմ*<br>***6 հատ 55.8/14.508 գմ/կգ***<br>*Ցանցը ամրակով d=3.0 մմ,1մ²=1.445 կգ, 1 հատ=2.5 մ²*<br>***6 հատ 15/21.675 մ²/կգ***<br>*Գաբիոնների կապող մետաղալար d=3.0մմ,1հատ=1.2գծմ,1 հատ=0.0665 կգ*<br>***6 հատ 7.2/0.4788 գմ/կգ*** | *մ³* | *1.5* | *27.77* | 41.66 |
| 8 | *Կողքի կուտակված գրունտի հետլիցք բուլդոզերով, տեղադրումը շերտերով, ջրի լցաբաշխումով և խտացում պնևմատոփանով:* | *մ³* | *115.5* | *0.956* | 110.42 |
| | ***III. Б-2-20 վաքեր*** | | | | |
| 1 | *Վաքերի ապամոնտաժում և կողքի կուտակում հետագա օգտագործման համար* | *մ³* | *2* | 22.01 | 44.02 |
| 2 | *Ավազակոպճային շերտի իրականացում h = 10սմ* | *մ³* | 1.75 | 6.06 | 10.61 |
| 3 | *Նոր հավաքովի վաքերի տեղադրում Б-2-20* | *մ³* | 1.5 | 148.97 | 223.46 |
| 4 | *Գոյություն ունեցող և նախօրոք ապամոնտաժված վաքերի տեղադրում* | *մ³* | *2* | 38.94 | 77.88 |
| 5 | *Վաքերի և գոյություն ունեցող մետաղական կիսախողովակի միացման բետոն B-20* | *մ³* | 0.12 | 127.16 | 15.26 |
| 6 | *Վաքերի ջրամեկուսացում* | *մ²* | 33.25 | 1.371 | 45.59 |
| | *IV. Ճանապարհային հագուստի նորոգում* | | | | |
| 1 | *Ճանապարհային ա/բ ծածկի քանդում $h_{միջ}$=10սմ էքս. 0.65մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 4,0 կմ հեռավորության վրա* | *մ³* | *8.6* | 2.404 | 20.67 |
| 2 | *Ավազակոպճային շերտ ա/բ h=10սմ* | *մ²* | *86* | 0.508 | 43.69 |
| 3 | *Խիճ h=16սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ²* | *մ²* | *86* | 3.782 | 325.25 |
| 4 | *Խոշորահատիկ ա/բ h=6սմ* | *մ²* | *86* | 6.44 | 553.84 |
| 5 | *Մանրահատիկ ա/բ h=3սմ* | *մ²* | *210* | 3.66 | 768.60 |
| 6 | *Կողնակների լրացում և ամրացում ավազակոպճային նյութով (h=5սմ-17.5մ², h=3սմ-52.5մ²)* | *մ²* | *70* | 0.41 | 28.70 |
| | *V. Արգելափակոցներ* | | | | |
| 1 | *Մետաղական արգելափակոցների տեղադրում* | *գծմ* | *160* | 24.755 | 3960.80 |
| | ***VI. Ե/բ 2.0x2.0մ խողովակի վերականգնում*** | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հունի մաքրում մուտքում (10eIV կարգի բնահող) ձեռքի աշխատանքով կողքի նետումով | մ$^3$ | 2 | 6.17 | 12.34 |
| 2 | Հունի մաքրում ելքում (10eIV կարգի բնահող) էքս. 1.0 մ$^3$ շ.տ. բարձում ա/հ վրա տեղափոխ. մինչև 300մ լիցքի (շրջանցիկ ճանապարհի) իրականացման համար (հարթում, ջրում, խտացում) | մ$^3$ | 84.32 | 2.46 | 207.43 |
| 3 | Ելքում ջարդված N47 բլոկների կազմատում էքս 1.0 մ3 շ.տ. բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. Վրա: | մ$^3$ | 2.82 | 1.6 | 4.51 |
| 4 | Խողովակի ելքի գլխավերևում կուտակված 10eIV կարգի բնահողի և քարային լիցքի մաքրում էքս. 1.0 մ$^3$ շ.տ. բարձում ա/հ և տեղափոխում մինչև 300մ լիցքի (շրջանցիկ ճանապարհի) իրականացման համար (հարթում, ջրում, խտացում) | մ$^3$ | 97.5 | 2.473 | 241.12 |
| 5 | Ելքի 2 օղակների տակ հիմքի, կարգավորիչ պատերի հիմքերի փոսորակների, վաքի և հենակային ատամի իրականացման համար հողային աշխատանքներ 10eIV կարգի բնահողում էքս. 1.0 մ3 շ.տ. կողքի կուտակումով | մ$^3$ | 27.8 | 0.77 | 21.41 |
| 6 | Ավազակոպճային նախապատրաստական շերտ հիմքերի և վաքի տակ - h=10սմ: | մ$^3$ | 5.4 | 6.75 | 36.45 |
| 7 | Ելքում 2 օղակների տակ միաձույլ բետոնե հիմքի իրականացում | մ$^3$ | 2.6 | 94.48 | 245.65 |
| 8 | Տեղախախտված օղակների ուղղում | հատ | 2 | 56.77 | 113.54 |
| 9 | Օղակների կարերի լրալցում ցեմ շաղախով b=3 սմ (հատակից 50 սմ բարձրությամբ վերջին 26 օղակների կարերը) | մ$^2$ | 2.16 | 2.93 | 6.33 |
| 10 | Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B 20, F 100 | մ$^3$ | 0.56 | 77.9 | 43.62 |
| 11 | Ելքում թևերի հիմքերի կառուցում միաձույլ բետոնից B20, F100 | մ$^3$ | 28.9 | 75.3 | 2176.17 |
| 12 | Ելքում թևերի իրանների կառուցում միաձույլ բետոնից B20, F100 | մ$^3$ | 23.15 | 77.9 | 1803.39 |
| 13 | Գրունտի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով | մ$^2$ | 74.5 | 1.37 | 102.07 |
| 14 | Հետլիցքի իրականացում | մ$^3$ | 24 | 0.77 | 18.48 |
| | | | | **Ընդամենը՝** | **23439.36** |
| | | | | **Ընդհանուրը՝** | **23439.36** |

*Միավորի արժեքը ներառում է շահույթը և Ա.Ա.Հ.

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ճանշին Տեխնախ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Ակներ, 15փ., 12/2տ.
«Արդշինբանկ» ՓԲԸ, «Գորիս» մ/ճ
ՀՎՀՀ 09211151
ՀՀ 2475700362170010

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*«04» մայիսի 2018թ. կնքված*
*N ՏԿՆ-ԲՄԱԸԶԲ-2018/5Ճ/1 ծածկագրով պայմանագրի*

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

## ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

*ՀՀ Սյունիքի մարզի Վերիշեն գյուղի վթարված կամրջի վերականգնման աշխատանքների կատարման*

| No | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | սկիզբը | ավարտը |
| 1 | Նախապատրաստական աշխատանքներ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 10օր հետո |
| 2 | Հենարանների վերանորոգում վաքի իրականացում | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 10օր հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30օր հետո |
| 3 | Անվտանգության էլեմենտներ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30օր հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 50օր հետո |
| 4 | Կամրջային պաստառի իրականացում | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 50օր հետո | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 70օր հետո |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ** | | **ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո** | **ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 70 օր հետո** |

## ՉԱՓԱԲԱԺԻՆ 2

*Ա/ճ Տ-8-81, Մ-12-Խնածախ-Վաղատուր-Տ-8-13 կմ2+800 հատվածի երկաթբետոնյա խողովակի վերականգնման աշխատանքների կատարման*

| No | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | սկիզբը | ավարտը |
| 1 | Շրջանցիկ ճանապարհի կառուցման աշխատանքներ | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 10օր հետո |

| | | | |
|---|---|---|---|
| | | մեջ մտնելուց հետո | |
| 2 | Խողովակի վերականգնման աշխատանքներ | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 10 օր հետո | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 40 օր հետո |
| 3 | Գաբիոնային շարվածքի և վաքերի իրականացում | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 40 օր հետո | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 60 օր հետո |
| 4 | Ճանապարհային հագուստի նորոգում | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 60 օր հետո | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 80 օր հետո |
| 5 | Անվտանգության էլեմենտներ | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 80 օր հետո | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 90 օր հետո |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ** | | **Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո** | **Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 90 օր հետո** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ճանշին Տեխնախ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Ակներ, 15փ., 12/2տ.
«Արդշինբանկ» ՓԲԸ, «Գորիս» մ/ճ
ՀՎՀՀ 09211151
ՀՀ 2475700362170010

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*« » մայիսի 2018թ. կնքված*
*N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/5Շ/1 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231177/306 | ՀՀ Սյունիքի մարզի Վերիշեն գյուղի վթարված կամրջի վերականգնման աշխատանքներ | | | | | | | | | | | | | |
| 2 | 45231177/307 | Մ/Ճ Տ-8-81, Մ-12-Խնածախ-Վաղատուր-Տ-8-13 կմ2+800 հատվածի երկաթբետոնյա խողովակի վերականգնման աշխատանքներ | | | | | | | | | | | | | |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ` որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ճանշին Տեխնախ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Ակներ, 15փ., 12/2տ.
«Արդշինբանկ» ՓԲԸ, «Գորիս» մ/ճ
ՀՎՀՀ 09211151
ՀՀ 2475700362170010

/ստորագրություն/
Կ.Տ.

*Յավելված թիվ 4*
*« » մայիսի 2018թ. կնքված*
*N ՏԿՆ-ԲՄԱԸԶԲ-2018/5Ծ/1 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
______________________
հվհհ ______________________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ______________________
______________________
հվհհ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ______________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքն ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________-ի
Պատվիրատուի անունը — Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20  թ. ________________________-ին կնքված N ____________
պայմանագրի կնքման ամսաթիվը — պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____________________
ազգանուն, անուն

_____________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____________________
ազգանուն, անուն

_____________________
ստորագրություն